

### 5.3. 2006թ. փետրվար ամսվա հիդրոտեղևուքաբանական պայմանները Հայաստանում

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության տեղեկատվության, փետրվար ամսին հանրապետության տարածքի մեծ մասում օդի ամսական միջին ջերմաստիճանը բարձր է եղել նորմայից 1-3, Արարատյան դաշտում՝ ցածր 1 աստիճանով:

Փետրվարի առաջին տասնօրյակում օդի տասնօրյակային միջին ջերմաստիճանը բարձր է եղել նորմայից 1.5-4.5, Արարատյան դաշտում՝ ցածր 1-2 աստիճանով: Երկրորդ տասնօրյակում օդի տասնօրյակային միջին ջերմաստիճանն ամենուրեք ցածր է եղել նորմայից 1-2 աստիճանով, բացառությամբ Գեղարքունիքի և Կոտայքի մարզերի, որտեղ այն բարձր է եղել նորմայից 1-2 աստիճանով: Երրորդ տասնօրյակում օդի տասնօրյակային միջին ջերմաստիճանը բարձր է եղել նորմայից 1-4, Տավուշում՝ 5 աստիճանով, բացառությամբ Շիրակի և Արարատյան դաշտի, որտեղ ցածր է եղել նորմայից 1-3 աստիճանով:

Միջին առավելագույն ջերմաստիճանը Սյունիքում կազմել է  $+8 +12^{\circ}\text{C}$ , Տավուշում՝  $+7 +9^{\circ}\text{C}$ , Լոռիում՝  $+2 +5^{\circ}\text{C}$ , Արարատյան դաշտում՝  $+2 +3^{\circ}\text{C}$ , լեռնային շրջաններում՝  $-3 +2^{\circ}\text{C}$ : Բարձր ջերմաստիճաններ դիտվել են երրորդ տասնօրյակում՝ 27-ին, երբ Սյունիքի հովիտներում գրանցվել է  $+21 +22^{\circ}\text{C}$ , Տավուշում՝  $+14 +20^{\circ}\text{C}$ , Սյունիքի նախալեռներում՝  $+10 +16^{\circ}\text{C}$ , Լոռիում՝  $+10 +12^{\circ}\text{C}$ , լեռնային շրջաններում՝  $+2 +8^{\circ}\text{C}$ , Արարատյան դաշտում՝  $+6 +12^{\circ}\text{C}$ :

Միջին նվազագույն ջերմաստիճանը լեռնային շրջաններում կազմել է  $-6 -12^{\circ}\text{C}$  (բացառությամբ Մասրիկ գյուղի /Գեղարքունիքի մարզ/  $-14^{\circ}\text{C}$ ), Լոռիում՝  $-5 -9^{\circ}\text{C}$ , Արարատյան դաշտում՝  $-4 -7^{\circ}\text{C}$ , Սյունիքի նախալեռներում՝  $-2 -7^{\circ}\text{C}$ , Տավուշում՝  $0 -4^{\circ}\text{C}$ , Սյունիքի հովիտներում՝  $-2 +1^{\circ}\text{C}$ : Ցածր ջերմաստիճան դիտվել է երկրորդ տասնօրյակի վերջում՝ 18-ին, երբ Շիրակում գրանցվել է  $-22 -29^{\circ}\text{C}$  (բացառությամբ ամսի 23-ի՝ Աշոցք գյուղում,  $-32^{\circ}\text{C}$ ), մնացած լեռնային շրջաններում՝  $-16 -20^{\circ}\text{C}$  (բացառությամբ Մասրիկ գյուղի՝  $-24^{\circ}\text{C}$ ), Լոռիում՝  $-16 -24^{\circ}\text{C}$ , Արարատյան դաշտում՝  $-10 -13^{\circ}\text{C}$ , Տավուշում՝  $-5 -14^{\circ}\text{C}$ , Սյունիքի նախալեռներում՝  $-9 -13^{\circ}\text{C}$ , Սյունիքի հովիտներում՝  $-4 -10^{\circ}\text{C}$ :

Ամսական տեղումների քանակն Արարատյան դաշտում կազմել է նորմայի 139-196%-ը, Գեղարքունիքում՝ 134-163%, Կոտայքում՝ 117-135%, Սյունիքում՝ 120-140% (բացառությամբ ք.Մեղրիի՝ 300% և ք.Կապանի՝ 170%), Շիրակում, Տավուշում, Լոռիում՝ 75-100%: Առանց տեղումների եղանակ դիտվել է ամսի 5-7-ին, 12-13-ին, 18-ին և 20-26-ին: Մնացած օրերին դիտվել են տեղումներ, առանձին վայրերում՝ անձրևի տեսքով:

Ճյան ծածկույթի բարձրությունը փետրվարի 28-ի դրությամբ առավելագույնը կազմել է Ամբերդ գյուղում (Արմավիրի մարզ)՝ 87 սմ, ք.Ջերմուկում (Վայոց ձորի մարզ)՝ 83 սմ, Կոտայքում՝ 58-66 սմ, Շիրակում՝ 28-48 սմ, Լոռիում՝ 25-26 սմ, Գեղարքունիքում՝ 8-33 սմ, Արարատյան դաշտում՝ 3-17 սմ, ք.Սիսիանում (Սյունիքի մարզ)՝ 12 սմ: Սյունիքի հովիտներում, ք.Գորիսում (Սյունիքի մարզ) և ք.Իջևանում (Տավուշի մարզ) ձյան ծածկը բացակայել է:

Հանրապետության գետերի մեծ մասում միջին ամսական ելքերը կազմել են նորմաների 95-125%-ը:

Սևանա լճի մակարդակն ամսվա ընթացքում բարձրացել է 3 սմ-ով և 2006թ. փետրվարի 28-ի դրությամբ կազմել 1898.12 մ, որը 2005թ. նույն օրվա համեմատ բարձր է եղել 40 սմ-ով: Ամսվա ընթացքում եզրասառույցը պահպանվել է: